

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔԻԱՆ

Ք Ո Ւ Թ Ե Շ

(ՍԿԱՐԼԱՏԻՆԱ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ.— ԹԵՐԵՎԱՆ

1 9 2 9

616.917


Ա

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ



Ք Ո Ւ Թ Ե Շ

(ՍԿԱՐԼԱՏԻՆԱ)



Հր. № 973: Դրանկվար № 2030 (բ): Տիրած 4000:

Պետրաթի առաջին տպարան վաղարշապատում:

Պատվիր № 78:



ՔՈՒԹԵՇ (ՍԿԱՐԼԱՏԻՆԱ)

Քութեշը մեծ մասամբ տարածված է լեռնա-
խաների մեջ. նրանով հիվանդանում են ամենից
շատ 2—10 տարեկանները. հիվանդանում են նաև
10—15 տարեկանները, բայց քիչ. իսկ լեռքեմն
հիվանդանում են և մեծերը:

Քութեշը վարակիչ հիվանդութուն է. վա-
րակիչ են կոչվում այն հիվանդութունները, վո-
րոնք անցնում են հիվանդից առողջին. վարակիչ
հիվանդութունն ունի մանրե, վորը շատ փոք-
րիկ կենդանի է և իր փոքրության համար ստա-
ցել է «մանրե» անունը. նրան տեսնելու համար
պետք է անպատճառ մեծացնել, վորովհետև հա-
սարակ աչքով տեսնել նրան չի կարելի, իսկ մե-
ծացնելու համար կա մի գործիք, վորն ունի մի
քանի հատ խոշորացնող ապակիներ. այդ ապակի-
ները մեծացնում են մանրելին 1000—1500 ան-
գամ և այդքան մեծացնելուց հետո չի մանրեն
հազիվ զրելու ժամանակ գործածվող կետի չափ
է լինում. այ թե վորքան փոքրիկ է մանրե ա-
սած արարածը:

Քուլթեշն ել ունի իր մանրեն, վորը մինչև այժմ դեռ չի գտնված, բայց չնայած դրան, լավ գիտենք, թե ինչ տեսակ հատկություններ ունինա. որինակ՝ գիտենք, վոր մանրեն գտնվում է հիվանդի արյան, թքի, մեզի մեջ. չեթե սրսկենք հիվանդի արյունն առողջին, նա չեւ կհիվանդանա քուլթեշով. չեթե հիվանդի թքից մի կաթիլ ընկնի առողջի վրա, նա չեւ կհիվանդանա. գիտենք նույնպես, վոր այդ հիվանդության մանրեն ընկնում է հիվանդի սենյակի մեջ գտնվող առարկաների վրա, պատերի վրա և չերկար ժամանակ, մինչև անգամ միքանի ամիս, կարող է կենդանի մնալ և, ընկնելով առողջի վրա, վարակել նրան. գիտենք, վոր այդ մանրեն մութ ու խոնավ տեղերում չերկար է ապրում, իսկ չոր ու լուսավոր տեղերում, արևի ճառագայթների տակ չի գիմանում և շուտ վոչնչանում է. գիտենք նույնպես, վոր այդ մանրեյին սպանում են զանազան դեղեր և բարձր տաքություն. գիտենք և այն, վոր այդ մանրեն շատ շուտ շատանում է և թուլն է տալիս ու այդ թուլնով թուլնավորում հիվանդին. այս բոլորից պարզ է, թե ինչ տեսակ արարած է քուլթեշի մանրեն:

Այժմ տեսնենք, թե ինչպես են հիվանդանում քուլթեշով:

Ամենից առաջ պետք է ասենք, վոր բոլոր

վարակվածներն ել չեն հիվանդանում. վարակիչ հիվանդութիւնով տկարանալու համար, բացի վարակվելուց, հարկաւոր ե, վոր վարակվածը կորցրած լինի դիմացկանութիւնը. այդ ե պատճառը, վոր քութեշով մեծ մասամբ հիվանդանում են չերեխաները, իսկ մեծերը՝ վոչ. մեծերն իրենք չեն հիվանդանում, բայց ունենալով իրենց վրա քութեշի մահրեններին, անց են կացնում ուրիշ չերեխաների վրա և հիվանդացնում նրանց.

Այստեղ առաջ ե գալիս մի հարց. ինչո՞ւ բոլոր չերեխաներն ել չեն հիվանդանում քութեշով. չերեքմն պատահում ե մի տան մեջ չերեխաներից մեկն ու մեկը հիվանդանում ե քութեշով, իսկ մյուսները չեն հիվանդանում. պետք ե իմանալ, վոր հիվանդանում են այն չերեխաները, վորոնք թուլակազմ են, վատ սնունդ ունեն, հիվանդ մաշկ ունեն. մաշկը ծածկում ե մարդու մարմինը և պաշտպանում ե նրան ամեն տեսակ վնասակարութիւններից. բայց չերե մաշկի վրա կա մի պլոկվածք, թեկուզ և շատ աննշան, չերե մաշկի վրա կա քերծվածք այնքան փոքր, վոր աչքով չի չել կարելի տեսնել, այն ժամանակ այդ քերծվածքով հեշտութեամբ անց են կենում մանրէները մարդու մարմնի մեջ և շատանալով ու թուլն տալով՝ հիվանդացնում են նրան. ամենքն ել գիտեն, վոր չերեխալի մաշկը

շատ նուրբ ե, և միշտ ել վրան կան զանազան
մեծ ու փոքր քերծվածքներ, դրա համար ել
ամենից շուտ հիվանդանում են այն լերեխանե-
րը, վորոնց մաշկն առողջ չե: հիվանդանում են
այն լերեխաները, վորոնք մի ուրիշ հիվանդու-
թյունից թուլացած են:

Ինչպես ուրիշ վարակիչ հիվանդությունների
ժամանակ, այնպես ել քութեշի ժամանակ
մանրենները մտնում են մարդու մարմնի մեջ ողի,
ջրի, ուտելիքի և խմելիքի միջոցով. ինչպես ել
վոր մտած լինեն մանրենները, միևնույն ե—քու-
թեշ: իր սովորական ձևով պետք ե գնա,
այնպես վոր նշանակություն չունի ողի միջոցով
ե վարակվել լերեխան, թե՛ ուտելիքի կամ խմե-
լիքի:

Սկարլատինան—քութեշը—սկսվում ե շատ
հանկարծ. լերեխան առավոտյան առողջ եր ու
գնաց դպրոց. դեռ դպրոցում սկսվում ե դողը-
քիչ հետո սկսվում ե գլխացավը. լերեխան տա-
քացնում ե և զանգատվում ե բկացավից. դեռ
վոչինչ չկա վրան, լերեխան փսխում ե, գնալով
լերեխայի դուլթյունը ծանրանում ե և լերեկոյան
մտնում ե անկողին: Հենց այդ լերեկո, կամ
մյուս որը, լերեքմն և 2-3 որից հետո լերեխայի
մարմնի վրա դուրս են գալիս խիստ կարմիր
գույնի մանր բծեր: Յեթե բաց անել տանք

լերեխալի բերանը, կտեսնենք, վոր լեզուն վառ-
կարմիր գունի չե, բուկն ուռած ե, կարմրած,
վրան կա բարակ փառ, կամ բոլորովին առանց
մի փառի: Հիվանդի շրթունքներն ու կղակը
(չանեն) սաստիկ գունատ են, իսկ ալտերը (թշերը)
ընդհակառակը խիստ կարմիր են. չերբեմն հենց
ալդ մի նշանի հիման վրա, այսինքն՝ շրթունք-
ների և կղակի գունատության, ալտերի կարմը-
րության՝ կարելի չե լինում իմանալ, վոր հի-
վանդն ունի սկարլատինա: Միքանի որից հետո
տաքությունն սկսում ե իջնել, մարմնի դուրս
տվածը քաշվում ե. 4-5 որից հետո մաշկն սկը-
սում ե թեփոտել, ալդ թեփն առանձնապես
շատ ե լինում ձեռների և վոտների վրա. ալդ
տեղերի մաշկը պոկ ե գալիս մեծ-մեծ կտորնե-
րով: Թեփը տևում ե 1-2 շաբաթ, վորից հետո
հիվանդն առողջանում ե:

Այսպես ե լինում սովորական քութեշը:

Յերբեմն շատ թեթև ե անցնում հիվանդու-
թյունը, նունիսկ այնքան թեթև, վոր չերեխան
ամբողջ ժամանակը վոտի վրա չե անցկացնում
հիվանդությունը. բայց չնայած դրան, ալդ տե-
սակ հիվանդն ել վարակիչ ե, և ալդ տեսակն
ավելի վտանգավոր ե ուրիշներին վարակելու կող-
մից վորովհետև հիվանդը վոտի վրա չե, նշաններ
չունի և վարակում ե մնացածներին առանց իմա-

նալու. վոր ինքն սկարլատինա ունի. թեթեւե-
սակի ժամանակ հիվանդը տաքացնում ե շատ
քիչ, բուկն ել քիչ ե ցավում, մարմինը դուրս չի
տալիս և միայն 1—2 շաբաթից հետո, չերբ մաշկն
սկսում ե թեփոտել, իմանում են, վոր հիվանդն
սկարլատինա չե ունեցել:

Բայց ամեն անգամ այդպես թեթեւ չի անց-
նում. սկարլատինայի վատութիւնը հենց նրա-
նում ե, վոր հաճախ ծանր ե լինում և շատ բար-
դութիւններ ե տալիս. հիվանդները շատ են մեռ-
նում կամ հիվանդութեան ծանրութիւնից կամ
նրա տված բարդութիւններից:

Յերբ մի վորե ե հիվանդութիւն չերկա-
րում ե և ծանրանում, չերբ այդ հիվանդութու-
նից տկարանում ե հիվանդի մարմնի մի այլ մասը,
այն ժամանակ ասում են՝ հիվանդութիւնը բար-
դացել ե, առաջ ե չեկել բարդութիւն:

Սկարլատինան ել ե տալիս բարդութիւն-
ներ. սկարլատինով հիվանդի արջան մեջ լող են
տալիս սկարլատինի մանրեները, վորոնք արջան
հետ պտուշտ են դալիս հիվանդի մարմնով. սկար-
լատինի մանրեներն արջան հետ ընկնում են հի-
վանդի ականջի միջին մասի մեջ, ընկնում են
սրտի մեջ, լյարդի մեջ, չերիկամունքների (սլու-
ճիկների) մեջ. չեթե այդ մանրեները շատ-շատ
են ու շատ ել թունավոր, այն ժամանակ արջունն

աշխատանքն է թունաւորւում, վոր հիւանդը շատ
շուտ մեռնում է և բանը բարդութիւնն էի հաս-
նում. չերբ մանրեները քիչ են լինում ու պա-
կաս թունաւոր, ահա ժամանակ ելի բարդութուն
չի լինում, հիւանդը շատ շուտ առողջանում է,
ինչպես և լինում է սկարլատինի թեթեւ տեսակի
միջոցին. բայց չերբ մանրեներն աշխատանքն են, վոր
չեն մեռնում, այլ ընկնում են հիւանդի սրտի,
սկանջի, պլոճիկներէ մեջ և նրանց ել տկարաց-
նում են, հիւանդը տաքացնում է չերկար ժա-
մանակ, դրութիւնը ծանրանում է և որեցոր
դեպի վատը գնալով, մեռնում. չեթե չի չել
մեռնում, հիւանդի վնասւած սիրտն ու պլո-
ճիկները միշտ ել տկար են մնում, կարգին չեն
աշխատում. հիւանդի սիրտը քութեշից հետո
լավ չի աշխատում, միշտ թուլ է մնում, շուտ
հոգնում է. սրտի հիւանդութեան պատճառով հի-
ւանդի մարմնի մասերն արցունքով չեն ստանում,
պլոճիկներէ հիւանդութեան դեպքում հիւանդը
շուտ-շուտ ջրգող հիւանդութիւնն է ստանում.
Ջրգողը դժվար է բժշկելը. իսկ սկանջներէ հիւան-
դութեան պատճառով հիւանդը խլանում է, քառ
է մնում. չեթե հիւանդը շատ փոքրահասակ է,
խլութեան պատճառով նա չի չել խոսելու, վո-
րովհետեւ չերեխաները խոսել սովորում են լսելով.
Իսկ ահա չերեխան, վորը փոքր հասակից կոր-

ցրել եւ լսողությունը, նա կլինի եւ համը—լալ։ Ահա թե ինչ տեսակ բարդություններ եւ տալիս քութեշը. ահա թե ինչու նա վտանգավոր հիվանդություն եւ։

Յերբ մի տան մեջ չերեխաներից մեկն ու մեկը հիվանդանում եւ սկարլատինով, ամենից առաջ պետք եւ հոգս տանել, վոր մնացածներն եւ չհիվանդանան. բայց առողջների մասին կպատմենք քիչ հետո, իսկ այժմ ասենք, թե ինչպես պետք եւ խնամել հիվանդին, վոր հիվանդությունը չծանրանա, բարդություն չտա։ Մեզ մոտ մի վատ սովորություն կա. հենց վոր չերեխաներից մեկն ու մեկի բուկը ցավում եւ, իսկուհն վազում են հարեան պառավ կնոջը կանչում հիվանդի բուկը ճխտելու. այդ կինն առանց լվանալու ձեռները, առանց մաքրելու մատը, ճխտում եւ հիվանդի բուկը. այդ կինը մեկի բուկը ճխտելուց հետո, առանց լվանալու ձեռքերը, գնում եւ մի ուրիշ տեղ բուկ ճխտելու։ Այդ տեսակ կանաչքն են տարածում հիվանդությունը մի տնից մյուսը, մի չերեխից մյուսին. բուկը ճխտելիս մատի չեղունիկ տակ են մտնում հիվանդի բլի մեջ չեղած մանրեները ու հետո մի ուրիշ բուկ ճխտելիս վարակում եւ մյուսին, վորովհետեւ բուկ ճխտողը չգլտե, թե հիվանդի բկացամի ինչ ցավ եւ՝ սկարլատինի բկացավ, թե հասարակ բկացավ.

ամեն մի գիտակից մարդ պետք է հասկանա, վոր բուկ ճխտելը բժշկությունն չէ. չեթե հասարակ բկացավ ե, առանց ճխտելու չել կանցնի, իսկ չեթե սկարլատինի բկացավ ե, ճխտելով չի անցնի, թեկուզ մի քանի անգամ ճխտեն: Բուկ ճխտելը վնասակար և վտանգավոր սովորությունն է, ապա ուրեմն պետք է միանգամից հրաժարվել նրանից. միայն տղետ մաչրը ճխտել կտա իր հիվանդ չերեխայի բուկը:

Մի ուրիշ վատ սովորությունն էլ կա մեզ մոտ. չերբ տան մեջ մեկն ու մեկը հիվանդանում ե, իսկույն լողացնում են և բաժակ դնում. քութեշով հիվանդին չպետք է լողացնել և չպետք է բաժակներ դնել. այդ չերկուսն ել ավելորդ են. բաժակ դնելու հարկավորությունն չկա, իսկ լողացնելը կարող է վնասել:

Սկարլատինի դեպքում պետք է անպատճառ դիմել բժշկին. նա կպատվիրի ինչպես պետք է խնամել հիվանդին, հիվանդատերն էլ պետք է կատարի բժշկի բոլոր պատվերները. բայց տարբախտաբար ամեն տեղ ել բժիշկ չկա, բժշկին հրավիրելը շատ դժվար է. հենց այդ տեսակ տեղերում ապրողների համար ել դրած է ես գրքուկը, վոր ամենքը կարդան, իմանան ինչպես ե լինում սկարլատինան և ինչպես պետք է խնամել հիվանդին:

Սկարլատինով հիվանդին պետք է տեղա-
 փոխել հիվանդանոց, չեթե հիվանդի ապրած տե-
 դում կա այդպես հիվանդանոց, իսկ չեթե չկա
 հիվանդանոց, և ստիպված պետք է հիվանդին
 տանը պահեն, հարկավոր է առանձին սենյակ
 տալ հիվանդին. այդ սենյակում ուրիշ չերեխաներ
 չպետք է լինեն, մեծերից ել միայն խնամողը,
 հիվանդին պահողը պետք է մնա. հիվանդը պետք
 է անպատճառ պառկի անկողնում. չպետք է շատ
 ծածկել նրան, բայց չպետք է մրսի չել նա. ան-
 կողինը շուտ շուտ ուղղել, արեին տալ, սպիտակե-
 դենը փոխել և շուտ շուտ լվանալ. հիվանդի հագի
 սպիտակեղենն ել պետք է փոխել, լվանալ, չե-
 ոացնել ու չորացնելուց հետո տաք հարթուկով
 (ուլթո) հարթուկել, սենյակի ողը մաքրել, փոշի
 չանել և հեռացնել սենյակից ավելորդ իրերը.
 չեթե հնարավոր չե հիվանդին տանել մի առանձին
 սենյակ, այն ժամանակ առողջ տնեցիք ուրիշ
 տեղ պետք է դնան, վորտեղ չերեխաներ չկան,
 և հիվանդը մնա եղ սենյակում: Հիվանդի վզի
 վրա դնել տաք ջրով թրջած շորի կտոր, վորի
 վրայից պետք է դնել չուղած թուղթ կամ մոմած
 թուղթ, իսկ սրա վրայից դնել բամբակ, բա-
 մազե կամ ֆլանելի, կամ շալի կտոր ու փաթա-
 թել. և այս բանն անել որական 2 անգամ. հի-
 վանդին տալ բորաթթվի ջուր բերանն ողողելու

համար: հարկավոր ե վերցնել մեկ բաժակ տաք ջուր և նրա մեջ հալեցնել բորաթթվի փոշուց մեկ թելի գդալ: Ջուրը սառչելուց հետո տալ հիվանդին 2 ժամը 1 անգամ բերանն ողողելու: Բորաթթվի ջուրը մաքուր կապահի հիվանդի բերանը և բուկը շուտ կմաքրվի: Հիվանդի տաքությունն իջնելուց հետո չթողնել, վոր նա վեր կենա և տնից դուրս գա, ալլ պետք ե պահել անկողնու մեջ, մինչև վոր մաշկը թեփ տա ու թեփը վերջանա: հիվանդներից շատը հենց տաքությունն իջնելուց հետո յեն մըսում ու բարդություն ստանում:

Խմելու համար հիվանդին պետք ե տալ թել, կաթ, եփացրած ու սառցրած ջուր, իսկ ուտելու համար՝ մսաջուր, կաթնով, սպաս, մածուն, ձու, հաց. աղի, կծծու և թթու ուտելիք չպետք ե տալ: զանազան թխվածքներ կարելի չե տալ, իսկ միս չպետք ե տալ: Խնամողը պետք ե ուշադրություն դարձնի և աչն բանի վրա, թե յերեխան դուրս գնում ե, թե վոչ: հիվանդը պետք ե ամեն որ դուրս գնա, վորովհետև, չեթե դուրս չգնա և կեղտոտությունը մնա աղիքի մեջ, դրանից հիվանդի դրությունը կծանրանա, գլուխը կցավի, տաքությունը կբարձրանա: չեթե հիվանդն ինքն իրան դուրս չի գնում, պետք ե ջրով հոգնա գնել, առանց սապոնի կամ մի ուրիշ դեղի: եփացրած

ու սառցրած ջրով պետք է անել հոգնան. իսկ հոգնա դնելու համար պետք է գործածել կամ հատուկ աման իր սարքով, կամ ռետինից փուչիկ:

Հիվանդին կարելի է լողացնել մաշկի թեփի վերջանալիս. սկզբում թեփը լինում է մեծ-մեծ կտորներով, հետո մանրանում է և պակասում. թեփի պակասած ժամանակ կարելի է լողացնել հիվանդին, շաբաթական 1 կամ 2 անգամ, բայց պետք է դուռ լինել, վոր լողացնելուց հետո հիվանդը չմրսի:

Յեթե հիվանդի կազմվածքն առողջ է, չեթե հիվանդի սենյակը լավն է, չոր է, լուսավոր է, տաք է և մաքուր, աչն ժամանակ վերը բերած խորհուրդները բավական են, վոր հիվանդը շատ շուտ առողջանա առանց մի բարդութան: Սկար-լատինի բժշկելու համար խմելու հատուկ դեղեր չկան, բայց կա սրսկելու դեղ. մաշկի տակն են սրսկում դեղը. իսկ սրսկելը միայն բժիշկը կամ բուժակը կարող է անել, դրա համար աշատեղ վոչ մի բան ասել չենք կարող. ով կարող է դիմել բժշկին կամ բուժակին, նա արդեն գիտե ինչ և ինչպես պետք է անել, իսկ ով չի կարող դիմել բժշկին կամ բուժակին, նա պետք է իմանա, վոր վորքան շուտ դիմեն, աչնքան լավ է, վորովհետև ինչքան շուտ սրսկեն դեղը, անքան շուտ կլավանա հիվանդը և բարդութուններ ել

չի ստանա. խնամքը գրքուշկ կարդալով կարելի
լի սովորել, բայց բժշկությունը գրքուշկ կար-
դալով չի կարելի, լավ կլինի, վոր հիվանդ չեղած
դեպքում անպատճառ դիմեն բժշկին կամ բու-
ժակին, վոր որ առաջ սրահուսմն անեն և հիվան-
դության առաջն առնեն:

Ինչ ասել կուզի, ավելի լավ ե չհիվանդա-
նալ սկարլատինով, ավելի լավ ե հիվանդ չունե-
նալ, քան թե իմանալ թե ինչպես պետք ե խնամել
ու պահել հիվանդին. իսկ թե ինչ պետք ե անել,
վոր չհիվանդանալ, հարկավոր ե իմանալ և միտքը
պահել հետևյալը. ինչպես բոլոր վարակիչ հիվան-
դություններից, աչնպես ել սկարլատինից պաշտ-
պանվելն ավելի հեշտ ե, քան նրանից բժշկվելը:
Հիվանդությունից պաշտպանվելը մի ոգուտ ել
ունի. չեքք բոլորը միջոցներ են գործ դնում և
պաշտպանվում են սկարլատինից, աչն ժամօճակ
հիվանդությունը հատ ու կենտով ե վերջանում,
չի տարածվում, վարակիչ հիվանդությունից պաշտ-
պանվելը նրա տարածման առաջն առնում ե:

Ինչպես պաշտպանվել սկարլատինից, պետք
ե ասած, վոր սկարլատինյան շատ տարածված ե
ամեն տեղ. մինչև այժմ դեռ գիտությունը չի
գտել աչնպես մի միջոց, վոր մի անգամից վերջ
գրվի աչդ հիվանդությանը, ինչպես որինակ,
խուլերի կամ ժանտախտի դեմ: Սկարլատինի հատ

ու կենտ դեպքերը միշտ ել պատահում են, բայց բանն այն է, վոր չերբեմն 7 տարին մեկ անգամ կամ 8 տարին մեկ անգամ, եղ հատ ու կենտ դեպքերը շատանում են, հիվանդութունը տալրածվում է, շատերն են հիվանդանում և սկարտախնան դառնում է համաճարակ, այսինքն ճարակում է բոլորին, բռնում է շատ չերեխաների: Պաշտպանողական միջոցները հենց նրա համար են, վոր սկարտախնան շատ չերեխաների չբռնի, չճարակի, համաճարակ չդառնա:

Յերբ մի տան մեջ չերեխաներից մեկը հիվանդանում է քութեշով, ամենից առաջ պետք է առանձնացնել հիվանդին. չեթե հիվանդի ապրած վայրում կամ մոտիկ տեղում քութեշով հիվանդների համար կա հիվանդանոց, պետք է անպատճառ տեղափոխել հիվանդին այնտեղ: Իսկ գլուղական այնպիսի վայրերում, վորտեղ չկան հիվանդանոցներ, հիվանդին կարելի չէ և տանը պահել, բայց եղ տեղակ հիվանդ պահելու համար պետք է ձեռք առնել նախադպրական միջոցներ. հիվանդին անհրաժեշտ է պահել առանձին, լավ, մաքուր, չոր, լուսավոր ու տաք սենյակում: Քութեշով հիվանդին ավելի լավ է պահել հիվանդանոցում, վորտեղ կան բժիշկ, բուժակ, քուլեր, վորոնք որովա մեջ մի քանի անգամ քննում են հիվանդին, վորոնք միշտ հիվանդի մոտ են:

լինում և ամեն մի փոփոխութուն պատահելիս հասնում են ոգնության և չեն թողնում, վոր հիվանդութունը բարդանա. իսկ չերը մոտիկ վայրում հիվանդանոց չլինել և պատճառով հիվանդը տանն ե բուժվում՝ անհրաժեշտ ե առողջ չերեխաներին առանձնացնել հիվանդից: Առանձնացրած առողջ չերեխաներին չթույնել դպրոց գնալ մինչև 10-12 որ. չեթե այդ ժամանակ առողջներից վոչ վոք չհիվանդացավ նրանք կարող են գնալ դպրոց և ուրիշ չերեխաների մոտ, իսկ չեթե մինչև այդ ժամանակի անցնելը նրանցից մեկն ու մեկը հիվանդացավ, պետք ե նրան ել տեղավորել առաջին հիվանդի սենյակում — և չերկու հիվանդին ել մի տեղ պահել: Հիվանդի տան դռան վրա դրսի կողմից մի թուղթ կպցնել վրան գրած՝ «այստեղ սկարլատինա կա», վոր ուրիշ մարդիկ չմանեն հիվանդի սենյակը: Մի շատ վատ սովորութուն կա մեզ մոտ. հենց վոր մեկի տանը հիվանդ ե լինում, հարևանները բոլորն ել գնում են հիվանդատես. չեթե չգնան, հիվանդի տերը կվիրավորվի հիվանդին աեսության գնալուց ել վատ բան չկա. հիվանդատես գնացողը պետք ե լավ իմանա, վոր վարակիչ հիվանդութունները տարածվում են հիվանդատեսների միջոցով, ինքը հիվանդատեսը կարող ե չվարակվել, բայց կարող ե հիվանդութունը տանել

իր հետ իրենց տուն կամ մի ուրիշ տուն և վա-
րակել իր կամ ուրիշի չերեխաներին. հիվան-
դատեսը մոչ մի ոգուտ չի տալիս հիվանդին, ընդ-
հակառակը, զրկում է հիվանդին հանգստությունից.
հիվանդի ծնողներն ունեն մի սենյակ, վորտեղ
և պառկած է հիվանդը. հիվանդատեսները շատ
անգամ մի քանի հոգի գալիս լցվում են սենյակը,
ողը փչացնում, խոսում, ծիծաղում, ծխում, հա-
զում, թքում ամեն տեղ. այդ պատճառով հիվան-
դատեսներից հետո հիվանդի դրությունը ծարնա-
նում է, գիշերը լավ չի քնում, անհանգիստ է
լինում, բայց ամենավատն այն է, վոր հիվան-
դատեսները տեղափոխում են հիվանդությունը
մի տեղից մյուսը. դրանց ոգնությամբ է հիվան-
դությունը տարածվում, բռնում ամբողջ գյուղը
և համաճարակ դառնում: Սկարլատինով հիվան-
դի սենյակը, բացի նրան խնամողից, ուրիշ
մարդ չպետք է մտնի, հիվանդատերերը պետք
է այնքան գիտակից լինեն, վոր չվիրավորվեն
իրենց հարևաններից, չերբ նրանք չեն գալիս
հիվանդին տեսության:

Հիվանդն ամենապակասը վեց շաբաթ պետք է
առանձնացրած մնա. վոր ուրիշները նրանից չվա-
րակվեն. միայն վեց շաբաթից հետո հիվանդին
կարելի է անվտանգ համարել ուրիշների հա-
մար. այն ել այն ժամանակ, չերբ հիվանդու-

թյունն անցել ե առանց բարդությունների, իսկ լերբ կան բարդություններ, չերբ հիվանդի տաքությունը դեռ շարունակվում ե, հիվանդն ելի վտանգավոր ե, և պետք ե նրանից զգուշանալ: Հիվանդի հետ մի սենյակում բացի խնամողից ուրիշ մարդ չպետք ե ապրի. չեթե այդ հնարավոր չե և ընտանիքում ուրիշ մեծահասակներ կան, աչն ժամանակ եդ մեծահասակները 6 շաբաթ չպետք ե գնան ախպիսի տեղեր, վորտեղ չերեխաներ կան, վորտեղ շատ մարդիկ են հավաքվում, որինակ՝ ժողով, դպրոց, խրճիթ-ընթերցարան և այլն, նրանք պետք ե զգուշ լինեն, վոր իրենց տնից հիվանդությունը մի ուրիշ տուն չանցնի:

Հիվանդի առողջանալուց հետո, կամ հիվանդանոց տեղափոխելուց հետո, կամ նրա մեռնելուց հետո պետք ե մաքրել նրա սենյակը, անկողինը, սպիտակեղենը, հագուստը և բոլոր այն իրերը, վորոնք չեղել են հիվանդի սենյակում. եժան և բոլորովին անպետք իրերը պետք ե ալրել. սենյակի հատակը, պատերն ու առաստաղը պետք ե լավ լվանալ դեղորայքով, բժշկի ցուցմունքով:

Ահա թե ինչպես են կռվում սկարլատինի տարածման դեմ. միևնույն ժամանակ ամեն մեկը պետք ե զգուշ լինի և միջոցներ ձեռք առնի, վոր ինքը չվարակվի. դրա համար հարկավոր ե. —

չգնալ աչն տունը, վորտեղ կա սկարլատինով հի-
վանդ. չեթե քո մի վորեւ գիրքը կամ տետրակը
կամ մի ուրիշ առարկան մնացել ե հիվանդի մոտ
նրա սենյակում, մի շտապիր հետ ստանալ. ախ-
տահանությունից հետո կստանաս գիրքդ ու տե-
տրակդ. գիրք կարդալիս չերբեր չթքոտել մաս-
ները լեզվով կամ շրթունքներով. ամեն տեսակ
գրքի և տետրակի ձեռք տալիս, մանավանդ չեթե
նրանք բանացրած են, պետք ե լվանալ ձեռքերը
ջրով ու սապոնով. միշտ մեջ մի քանի անգամ
լվանալ ձեռքերը սապոնով ու ջրով, մանավանդ
ուտելուց և քնելուց առաջ, վորովհետեւ մարդիկ
մեծ մասամբ վարակվում են իրենց ձեռքերից.
չգնել փողոցում կամ խանութում արկղների մեջ
բաց պահած ուտելիք, առանց թղթի անուշեղեն,
արևածաղկի հատիկներ, խմորեղեն և այլն, վորով-
հետեւ այդ բաց պահվող ուտելիքները միշտ ել
կեղտոտված են լինում փոշուց, ողից, ձեռք տա-
լուց. նրանց վրա կարող ե ընկած լինել հազա-
ցողի թուփը, խսկ թքի հետ և սկարլատինի կամ մի
ուրիշ վարակիչ հիվանդության մանրէներ ու
այդպիսով վարակել. չմոռանալ, վոր կարելի չե
վարակվել և ուրիշի մատիտից, գրչակոթից, շվի-
կից, թութակից, ապա ուրեմն չպետք ե բերանը
տանել ուրիշին պատկանող ալդ իրերը. չպետք ե
քնել ուրիշի անկողնում. չպետք ե համբուրվել և

մանավանդ չպետք է համբուրել լերեխաներին, սկարլատինից մեռածներից նույնպես պետք է դդուշանալ. նրանց թաղելիս դադաղը պետք է ծածկված պահել, ձեռք չտալ դադաղի մեջ դրած մեռածին, չհամբուրել նրան. սկարլատինից մեռածին համբուրողը կարող է վարակվել, իսկ լեթե ինքը չվարակվի, կարող է հիվանդութունը տուն տանել և վարակել իրենց տան լերեխաներին:

Սկարլատինից պաշտպանվելու համար բժիշկները վերջերս մի ճար են գտել. սկարլատինի սպանած մանրենները սրսկում են առողջների մաշկի տակ և այդ տեսակ սրսկումները պաշտպանում են առողջին սկարլատինով վարակվելուց. այդ տեսակ սրսկումը կոչվում է պատվաստ. ինչպես վոր ծաղկի դեմ են պատվաստում, այնպես էլ սկարլատինի դեմ. միայն սկարլատինի դեմ պատվաստն անում են 3 անգամ. առաջին սրսկումից հետո սպասում են մեկ շաբաթ ու հետո կրկնում են. սրանից հետո ելի սպասում են մեկ շաբաթ և չերրորդ անգամ են սրսկում: Եդ պատվաստը, ինչպես ցույց են տվել փորձերը, պաշտպանում է առողջին սկարլատինով վարակվելուց մոտ մի տարի ժամանակով: 1928—1929 թ. Հայաստանում շատ ու շատ լերեխանների պատվաստեցին, և կարելի չե ասել, վոր պատվաստը մեծ ոգնու-



Թյուն տվեց քութեշի առաջն առնելու գործում.
ահնպես վոր խորհուրդ ենք տալիս՝ ով ուզում ե,
վոր չերեսխաներն ազատ լինեն քութեշից, թող
ժամանակին դիմի ում հարկն ե և պատվաստել
տա չերեսխաներին:

Տեղական առողջապահության աշխատավոր-
ները քութեշի դեմ կռիւելու համար պետք ե բաց
անեն հիվանդանոցներ քութեշով հիվանդներին
բժշկելու և խնամելու համար. բացի դրանից պետք
ե ժողովրդի մեջ տարածել փոքրիկ գրքույկներ
քութեշի, նրա տված վնասների մասին, հիվանդ-
ներին խնամելու մասին և քութեշի դեմ կռիւ-
լու միջոցների մասին. բնակիչներն ել պետք ե
կարգան, լսեն բժիշկների խորհուրդներին և չթագ-
ցնեն հիվանդներին, չդիմեն զանազան հեքիմ-
ների ու պառավ կանանց, այլ աշխատեն ոգնել
առողջապահության աշխատավորներին կռիւելու
քութեշի դեմ. չեթե ինքը հասարակությունը
չմասնակցի, բժիշկների և ուրիշ աշխատավորների
գործ դրած աշխատանքը հաջողություն չի ու-
նենա. պետք ե հետևել խորհրդային բժշկականու-
թյան հետևյալ խոսքերին. — աշխատավորների ա-
ռողջության պահպանությունը, աշխատավորների՝
իրենց գործն ե. քութեշից կարելի չե փրկվել
միայն այն ժամանակ, յերբ ինքն աշխատավորն

եւ ե մասնակցում քութեշի դեմ տարվող պայ-
քարին:

Ինչպես տեսնում եք, քութեշը մեծ չարիք եւ
շատ վտանգավոր հիվանդութիւն: Նրան կարելի
է հաղթել ընդհանուր եւ միացած ուժերով:





ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



FL0039866

(054)

A $\frac{I}{4701}$

Д-р А. Меликян.
СКАРЛАТИНА



ԳԻՆԸ 8 ԿՈՊ.